— Բայց ի՞նչ կը շտապես,— ըսաւ Խոսրով, — մենք մեր աղջիկը ազատեցինք, բայց հոն պէտք է ուրիշ հայ աղջիկներ ալ գտնուին, որ կարելի չէ այդ կատաղի կնոջ ձեռք ձգել, ազատենք նոքա էլ: Զրուցէ, Արիգա, դեռ ուրիշ հայ աղջիկ կա՞յ ներսը:

— Չորս հատ փոքր աղջիկներ կան, մէկը իմ տարիքովս հազիւ կը լինի:

— Մեծերուն մէջ հայ չի կա՞յ ամենեւին:

— Երկու հատ կային, բայց հանըմը այնչափ չարչարեց, որ յուսահատեցան՝ խաչին վրայ կոխեցին եւ Քրիստոս ուրացան:

— Դո՛ւ ի՞նչ բանի համար բանտն էիր,— հարցուց Խոսրով:

— Ես էլ չգիտեմ, ամիս մը կայ, որ հանըմը ամուսնոյն հետ վէճ մը ունեցաւ, զիս անոր առջեւ սաստիկ ծեծեց, եւ անկից ի վեր բանտն եմ. դեռ վէրքերս նոր առողջացան:

— Շա՛տ բարի. դուք հայր ու աղջիկ իրարու հետ տեսնուեցէք, ես պէտք եղածը հոգամ:— Երբ ելաւ, տեսաւ, որ կանանոցին դռները բացուեցան եւ սեղան մը կերակուրներով զարգար եալ դուրս կը հանէին երկու սեւ ստրուկք, երկու ուրիշ ստրուկք էլ պարկերով ձիաններուն գարի կը բերէին: Գարին առնուլ հրամայեց, իսկ կերակուրները ետ դարձնել. նոյնպէս լուր ղրկեց, որ տանտէրը շուտով դուրս գա, վասնզի հարկաւոր բան ունէր զրուցելու:

Երբ Ալի եկաւ, Գուրգէն զինք մէկ կողմն առաւ եւ ըսաւ.

— Այստեղ չորս փոքրիկ հայ աղջկունք կան, եւ երկու էլ չափահաս, որ նոր ուրացեր են իրենց կրօնքը, այդ վեց աղջիկները հիմա մեզ պէտք է յանձնուին:

— Բայց անկարելին կ'ուզէք, ինչպէ՞ս կրնամ ձեր այդ պահանջմունքը Տիկնոջ հաղորդել, այդ աղջիկներն իրեն արծաթագին աղախիններն